

նիլ մի օտար իշխանութեան, իւրեանց իրաւունքն որ և իցէ մի քաղաքի վերա առանց երկրի նախարարների յօժարութեան, որ սոքա նմանապէս չէին կարող այդպիսի մի տեսակ հրաժարումն անել, առանց յայտնի հաւանութեան պետութեան առաջին ղլխաւորի, որ թագն և ամբողջ թագաւորութիւնն վերաբերում էին ազդին՝ որոյ նախարարներն ներկայացուցիչք էին և թագաւորն չէր ոչ այլ ինչ՝ և թէ, ոչ նոցա աւանդապահն\*): Այդ երկրի պատմութիւնն ցուցանում է, այլ և նախարարների մի անչափաւորեալ կարողութեան օրինակներ. նոքա թոյլատրում էին իւրեանց երբեմն դահլնկէց առնել զթագաւորն ըստ իւրեանց կամոց: Այլ պարագայից մէջ թագաւորներն երեւում են չունենալ կարողութիւն հրաժարել թագից և տալ զայն այլում ընտրեալ իրենցից, և ոչ էլ հաստատել մի ամուսնական խնամութիւն մի օտարական անձի հետ առանց նախարարների յօժարութեան:

(Շարունակէլ):

Բ. ՍՈՃԻԱ ԱՌԱՔԵԼՆԱՆՑ.

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԱՆՈՆՔ ԸՌՈՂՋՈՒԹԵԼՆ

ԵՒ

ԲԺՇԿՈՒԹԻՒՆ ՊԱՏՈՆԱՐԱՆ.

Ներածութիւն: Կանոնք առողջութեան ուսուցանին պահել զառողջութիւնն, ճանաչել տկարութեան պատճա-

ւքս, և հնարս, որով քաջահմուտքն կարեն կանխել և խափանել այնոցիկ պատճառաց ազդեցութիւնս:

Եւրբ այսոցիկ հնարք իւրեանց բնութեամբն մտանեն բժշկութեան և վերաբուժութեան տէրութեան տակ՝ յայնժամ բժշկականութեան ուսումն՝ նախապահ պանդական բժշկութեան անունն առնու:

Բժշկականութեան ուսումն մեծ իմն օգտաւէտութիւն է բժշկութեան՝ հիւանդացած մարմինն վերստին առողջացուցանելովն, և առողջապահական դարմանս սահմանափակելովն:

Նախնեաց մէջ գրեթէ բոլոր բժշկութիւն էր ուսումն առողջութեան. հնոյ ժողովրդոցն խնամարկող օրինաց մեծ մասըն՝ մանաւանդ Մովսիսական օրինաց՝ զոր Մահմէտ վերստին առաջ եբեր, ամենաիրաւացի առողջապահութեան օրինաց հիմունքն են:

Այս նոր օրէնքն սքանչելի ընէր արդեօք հիւստամուտ անձին, որ նախնեաց ետ այնչափ արդասիտ, մարմնամարդութիւնն, և բաղանիք ընդհանրական էր նոցա, և գրեթէ ամենօրեայ. նոքա կրէին լայն և փայլուն զգեստս, քաջ զիտելով թէ այնպիսի հանգերձք ջերմացուցիչ են ի ձմրան և զովարար յամրան:

Այլ աւանդ՝ զի բազում վրիպմունք ըսպրդեցան այն գերազանց ուսմանց մէջ, բժշկականին մէջ քանի ինչ յիմարութեան և սնապաշտութեան արդիւնք. այլք թուեցան արտասուելի գիտութեան հետ: Որպէս լիզուրիոս\*) ի մահ դա-

(\*) Մատ. եղեւ. ձեռագիր օրին. Թագաւոր. գրատան մէջ:

(\*) Էր մեծահամուտ օրէնդիր Սպարտիացոց, որ կրթութեան ամենազիջելի օրինաց հակառակ



տապարտէր ըստ արտաքին երևութին տկար ծնեալ մանկունան, որք կարէին լի- նել հղօր զինուորք ի ժամանակին, և զա- ոողջս կարծելով առաւել ևս հաստա- տուն գործել, ցուրտ ջրոյ մէջ ընկղմէին իւրեանց մօր զրկէն անմիջապէս որոշէին զկնի: Աղէտալի փորձ, որ ի մեր ժամանակս անգամ ունի իւր կոյր կուտակիցս:

Բայց ո՞ր, ո՞ր անձն բարեզգած չ'պիտի քրտամբք թաթաւի այդ ուռկանի մէջ: Ահգուրկոս և մեծ մասն մեծամեծաց հը- նոց առաւել ցանկային ունել բազմաթիւ զօրականս՝ քան թէ մտախոհս. այսպէս ևս խնդրէին արդեօք զարգացուցանել ըզ- մարմին. նոքա մարդէին ջիւս առաւել քան ուղեկս. նոցա ուսմանց մէջ մարմ- նամարզութիւնն ունէր առաջին տեղին. Սպարաբա և Թէքայիդ ըմբօք ճոխանա- յին, բայց հեռի ելով փորձոյ Քաբանիսի՝ ըմբիշք նախնեաց ժամանակին անհոգ մարդկան կարգին վերաբերէին:

Երեք տեսակ ազգու ներգործութիւնք են առողջութեանց: Սիւնէ՛, որով ապ- րիմք, Երբայտսս մարմնոյ Գործադրութիւն, և Խառնեալ Գոյն-Նիւն:

(Շարժման):

Թ. ՅԱՎԱՆԵՆԻՍ ՎԱՐՊԱՊԵՏ ԵՐԵՄԵԱՆ.

## ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱԿԱՆ

ՊԱՐԲԵՐՈՒԹԻՒՆՔ:

Ա՛ր եւ իցէ աշխարհի՛ Սղի եւ ընկերութեան յա- ռաջադիմութեան եւ պայծառ յարատեւութեան համար զկաւար պէտք եւ միջոցներէն է Ողջամիտ կարծեաց ազատութիւն:

Ար կապկասի այս գործիւն՝ անդ չիք յարատեւ յառաջադիմութիւն եւ կենդանութիւն:

Սակայն կարծեաց ազատութիւն կապահանջէ ան- շուշտ եւ առաւել արդիւնաւոր կգործէ երբ զուգըն- Թաց աջակից ունի զՄարմնոյ ազատութիւն, որով ողջա- միտ կարծիք եւ խորհուրդներ առանց անձուկ սահմանի մէջ կռանուելոյ եւ խեղդուելոյ՝ հրապարակական ա- տեաններ այս ինքն բանիմաց ժողովրդեան դատաստա- նին կներկայանան հրատարակութեամբք, եւ արժանի ներգործութիւնք եւ արդիւնք եւ կամ բացասութիւ- նը կստանան: Արովհետեւ մինչ բանասէր մի անձն մի խնդիր կյուզէ, այդ խնդիր ենթարկուելով քաղեաց ազատ եւ ողջամիտ կարծեաց եւ դատողութեանց՝ այնպէս կմշակուի՝ զի առաւել օգտաւէտ կերպարանք կզգենու եւ գործնական արդիւնք կարտադրէ հասա- րակաց զարգացման եւ բարօրութեան համար:

Իսկ Մարմնոյ ազատութիւնը պէտք չէ եղրակացնել յոկ հիւն եւ նոր մասեւեագրութեանց հրապարակութեանց մէջ, — որոց արդիւնք՝ ըստ տեղւոյն եւ պարագային՝ ոչ այնքան նշանաւոր կարող են լինել. — այլ յատկա- պէս հրապարակական պարբերութեանց, այս ինքն օ- րական, շաբաթական եւլն. լրագրաց եւ ամսամերթից մէջ կրպահանջուի այս, որոց օրական եւ ամսական զիրքեր շատ յարմարութիւններ ունին եւ բազմաթիւն հանդիսանալ կարող են:

Ըստ այսմ արդարեւ հրապարակական պարբերու- Թիւնք՝ երբ հմուտ, ողջամիտ եւ անկեղծ խմբագրու- Թեանց եւ տնօրինութեանց տրամադրութեանց ստո- րադրեալ կհրատարակուին, եւ զբական ասպարիզին մէջ մոխ եւ բարի նպատակներ մթերած եւ բեռնա- ւորած կգործեն, հանապազօրեայ լուրերով ժողովր- դեան հետաքրքիր ուշադրութիւնք հրապուրելով ոչ թէ միայն ընթերցասիրութիւն կուտուցանեն եւ կտարա-

տալի սպանանել ըստ երևութին տկար ծնեալ մանկունան, որք գուցէ կարէին հղօր զինուորք հանգիստաւ. որոց ճիշտ նմանութիւն է խառ- նել մեղր լիզուոյ հեռ, որպէս Մ. Տ. օրինաց հեռ և սնապաշտութիւնն: